



Ք Ա Ղ Վ Ա Ծ Ք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՆԻՍՏԻ
Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն Ի Ց

2 հունիսի 2011 թվականի N 21

2. ԱՐՏԱՀԻՎԱՆԴԱՆՈՑԱՅԻՆ ԲՈՒԺՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՑԱԲԵՐՈՂ
ԲՈՒԺՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ (ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱՆԵՐԻ) ԿՈՂՄԻՑ
ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՏԵՂԵԿԱՆՔՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ
ԿԱՆՈՆԱԿԱՐԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Հայաստանի Հանրապետության պետական կառավարման մարմինների ղեկավարներին՝ վերանայել և անհրաժեշտության դեպքում կատարել կամ նախապատրաստել իրավական ակտերի համապատասխան փոփոխություններ՝ սոցիալական, կրթական, առողջապահական հաստատությունների դիմողներին և աշխատողներին կամ աշխատանքի ընդունվելու համար դիմած քաղաքացիներին օրենքով չսահմանված տեղեկանքների տրամադրման հնարավորությունը բացառելու համար:

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարին՝ կատարել անհրաժեշտ փոփոխություններ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2010 թվականի դեկտեմբերի 9-ի N 1993-Ա հրամանում, անհրաժեշտության դեպքում այլ գերատեսչությունների հետ նաև այլ իրավական ակտերում բացառելով սոցիալական, կրթական, առողջապահական հաստատությունների դիմողներին և աշխատողներին կամ աշխատանքի ընդունվելու համար դիմած քաղաքացիներին օրենքով չսահմանված տեղեկանքների տրամադրման հնարավորությունը:

3. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարին, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարին,

Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարին, Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարին, Հայաստանի Հանրապետության մարզպետներին՝ համապատասխան նախարարությունների և մարզպետարանների ենթակայության սոցիալական, կրթական, առողջապահական հաստատություններին հանձնարարել և առաջարկել Երևանի քաղաքապետին՝ ձեռնպահ մնալ դիմողներից և աշխատողներից կամ աշխատանքի ընդունվելու համար դիմած քաղաքացիներից օրենքով չսահմանված, մասնավորապես, ուսումնական հաստատություններ դիմողների և աշխատանքի ընդունման բժշկական հետազոտության, սննդի և նրանց հավասարեցված աշխատողների պարբերական բժշկական զննության, ուսումնական (ուսումնարաններ և բարձրագույն ուսումնական հաստատություններ), մասնավոր հանրակրթական դպրոցական ու նախադպրոցական հաստատությունների մանկավարժների և դաստիարակների առողջական վիճակի պարբերական բժշկական զննության, յոդավազանից օգտվելու վերաբերյալ, սանատոր-կուրորտային բուժման մեկնողների համար, սանատոր-կուրորտային բուժման ուղեգրի ստացման համար, երեխայի որդեգրման և խնամակալության համար բժշկական, մինչև 18 տարեկան երեխաների առողջության կամ հիվանդության վերաբերյալ (այդ թվում՝ մարզադպրոց և սպորտային խմբակներ հաճախելու նպատակով), հիվանդությունից հետո երեխաների հաճախունը դպրոց, մանկապարտեզ թույլատրելու վերաբերյալ, ռազմական ուսումնական հաստատություններ ընդունվելու համար, նախադպրոցական հաստատություն կամ դպրոց (շրջապատի թերթիկ) ընդունվելու և այլ տեղեկանքներ պահանջելուց կամ տրամադրելուց:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ

2011 թ. հունիսի 23
Երևան

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

